# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ, 2018 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

# ՆԱԽԱԲԱՆ

2018 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) իրականացման աշխատանքներն առավելապես ուղղված են եղել 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության և համապատասխան վերլուծությունների իրականացման աշխատանքներին: ԱՃԹՆ-ի շրջանակում մշակված օրենսդրական փաթեթն անհետաձգելի կարգով քննարկվել և ընդունվել է Ազգային ժողովում: Օրենսդրական փոփոխությունները միտված են օրենսդրության մեջ ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված ընդերքօգտագործման ոլորտում տեղեկատվության հրապարակումը որպես պարտադիր պահանջ ամրագրմանը:

Սույն եռամսյակում իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը վերաձևակերպվել է կառավարության արձանագրային որոշման, և ՀՀ վարչապետի մարտի 27-ի թիվ 297-Ա որոշմամբ կազմվել է իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը երկամսյա ժամկետում մշակելու է համապատասպան իրավական ակտերի նախագծերը:

Հաշվետու ժամանակահատվածում տարվել է նաև արդյունավետ աշխատանք դոնոր կազմակերպությունների հետ: ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացին իրենց աջակցությունն են ցուցաբերում Համաշխարհային բանկը, Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատունը և Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչությունը: Շարունակվել է համագործակցությունը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ:

Նախնական ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ որոշ տեղեկատվության ձեռք բերման անհնարինությունից ելնելով՝ ԱՃԹՆ-ի քարտուղարությունը իրականացրեց լրացուցիչ վերլուծություններ՝ ԲՇԽ-ի կողմից կարևոր որոշումների կայացման համար հիմքեր ստեղծելու նպատակով: Քարտուղարության կողմից սկսվեցին նաև հաշվետվության ձևաթղթերի մշակման աշխատանքները՝ քննարկումներ կազմակերպելով պետական մարմինների և գործարար համայնքի հետ:

*Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:*

# ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2018Թ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 2. ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ՀՀ ԱՃԹՆ-ի կայք, տվյալների բազաներ, տվյալների բազաների վերլուծության գործիքներ՝ տեղեկատվությունը մատչելի տեսքով և առցանց ներկայացնելու, հարցումներ կատարելու, տվյալներն ազատ տեսնելու համար, առցանց հաշվետվությունների ներկայացման պորտալի ձևավորում *Վերջնաժամկետը՝* 2018թ. հունիս | Ընթացիկ | ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* կայքում հրապարակված հաշվետվություններ, տեսագրությունների, արձանագրություններ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. Հանքարդյունաբերության** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում** | *Արդյունքները՝* տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի հաշվետվություն, ԲՇԽ-ի տարեկան հաշվետվություն, տեղեկատվական տեսահոլովակներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. Հաղորդակցության ռազմավարության[1] մշակում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* հաղորդակցության ռազմավարության նախագիծ *Վերջնաժամկետը՝* 2018թ. ապրիլ | Ընթացիկ | ԲՇԽ, Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդունաբերության կենտրոն (ՀԱՀ ՊՀԿ), ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 9. Իրազեկության բարձրացման** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[1] Հեռահաղորդակցության ռազմավարությունը 2017թ. մայիսի 5-ի նիստի ընթացքում վերանվանել է «Հանրային հաղորդակցության ռազմավարության»:

| | | | | |
|---|---|---|---|---|
| **միջոցառումների իրականացում** | *Արդյունքները՝* կլոր սեղաններ, հանդիպումներ, այդ թվում՝ ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ, հանդիպումներ կրթական հաստատությունների հետ<br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն | |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |

*Միջոցառում 2. ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում*

Հայատանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակում մրցույթի արդյունքում Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի մշակումն իրականացնող ընկերություն է ընտրվել «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն: Հաշվետու ժամանակահատվածում ընթացել են կայքի պատրաստման աշխատանքները. քարտուղարությունը ընկերության աշխատակիցների հետ հանդիպումների արդյունքում հստակեցրել է կայքի դիզայնի, կառուցվածքի՝ բաժին, ենթաբաժին, հաշվետվությունների համակարգ, համապատասխան միավորում պահվող տեղեկատվության տեսակների, բաց տվյալների քաղաքականության հետ կապված հարցեր: Ավարտվել են կայքի դիզայնի մշակման աշխատանքները: ԲՇԽ-ի կողմից դիզայնի հաստատմանը պետք է հաջորդի կայքի և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի մշակումը:

*Միջոցառում 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)*

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջը [2] հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել է, ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն հայերեն և անգլերեն լեզուներով:

*Միջոցառում 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում*

Հաշվետու եռամսյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից ընթացել են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2017 թվականի տարեկան հաշվետվության մշակման աշխատանքները: Տարեկան հաշվետվությունը պետք է հաստատվի ԲՇԽ-ի կողմից և հրապարակվի մինչև 2018թ. հուլիսի 1-ը:

*Միջոցառում 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)*

Շարունակվել են պարբերաբար թարմացվել Facebook[3], YouTube[4] և Twitter[5] ցանցերում ստեղծված Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվում է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա

[2] http://gov.am/am/eiti/

հասանելությունը լայն հանրության համար:

*Միջոցառում 7. Հաղորդակցության ռազմավարության մշակում*

Հայաստանում Միացյալ Թագավորության (ՄԹ) դեսպանատան ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում մարտի 16-ին ՀԱՀ ՊՀԿ-ն Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությանը ներկայացրեց հանրային հաղորդակցության ռազմավարության նախագիծը: ՀԱՀ ՊՀԿ-ին առաջարկվել է փաստաթուղթը համապատասխանեցնել ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներին և ֆինանսական միջոցներին, ինչպես նաև նախագծում ինտեգրել իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը՝ միջոցառումների վերջնաժամկետներով, ինչպես նաև Համաշխարհային բանկի դրամաշնորհով նախատեսված միջոցառումները: Առաջարկվել է նաև ռազմավարության տեքստային հատվածը (առանց հավելվածների) կրճատել մինչև 30 էջ, իսկ միջոցառումները հստակեցնել՝ դրանք կիրառելի դարձնելու նպատակով:

*Միջոցառում 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում*

Հաշվետու եռամսյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը իրականացրել է 3 հանդիպում հանքարդյունահանող կազմակերությունների խմբակցության, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցում ընդգրկվելիք արդյունահանող կազմակերպությունների պաշտոնյաների և ֆինանսական պատասխանատուների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման ընթացքը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ներկայացման պահանջը, տեղի են ունեցել հաշվետվություններով ներկայացվող տեղեկատվության շրջանակի վերաբերյալ քննարկումներ:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային քննարկումներ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ ճանապարհային քարտեզի նախագծի հրապարակում, հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14.1. Իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ միջգերատեսչական աշխատանքային | Ընթացիկ | ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, | |

[3] https://www.facebook.com/EITIArmenia/
[4] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[5] https://twitter.com/EITI_Armenia

| | | | | |
|---|---|---|---|---|
| **աշխատանքային խմբի (ԱԽ) ստեղծում և օրենսդրական փաթեթի մշակման համար հանդիպումների իրականացում** | խումբ, հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* 2018թ. մարտ-մայիս | | ԲՇԽ, ԱԽ | |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |
| *Միջոցառում 14.1. Իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խմբի (ԱԽ) ստեղծում և օրենսդրական փաթեթի մշակման համար հանդիպումների իրականացում*<br>Համաձայն ՀՀ՝ ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի որոշմամբ սահմանված միջազգային պարտավորության՝ Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն մինչև 2018թ. հունվարի 1-ը հաստատել, հրապարակել և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն է ներկայացրել ՀՀ մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման համար անհրաժեշտ միջոցառումների ճանապարհային քարտեզը, որը կազմվել էր ներգրավված միջազգային և տեղական խորհրդատուների կողմից՝ ԲՇԽ-ի, ԱՃԹՆ-ի քարտուղարության, լիազոր պետական մարմինների պատասխանատուների և այլ շահագրգիռ անձանց հետ համագործակցելով: Ճանապարհային քարտեզը ներկայացվել է մարտի 22-ին կայացած ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստին՝ իրազեկման և հետագայում նաև կառավարության որոշման տեսքի բերելու նպատակով: Այնուհետև ճանապարհային քարտեզն ամրագրվել է 2018թ. մարտի 29-ի «ՀՀ մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N12 արձանագրային որոշմամբ[6], և իրավական ակտերի նախագծերի մշակման նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ (2018թ. մարտի 27-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի N 297-Ա որոշում[7]): Համաձայն որոշման՝ աշխատանքային խմբում քննարկված և կայացրած որոշումների իրավական ձևակերպումները պետք է ապահովի Արդարադատության նախարարությունը, իսկ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը պետք է երկամսյա ժամկետում սահմանված կարգով կառավարության աշխատակազմ ներկայացնի աշխատանքային խմբի կողմից մշակված ՀՀ մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը: Խմբում ընդգրկվել են ինչպես ԲՇԽ-ի համապատասխան աշխատանքային խմբի անդամները, այնպես էլ ներկայացուցիչներ այլ մարմիններից (Կենտրոնական բանկ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով) և ոլորտային փորձագետներ:<br>Միջգերատեսչական աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպումը կայացավ մարտի 30-ին, որի ընթացքում շոշափվեցին իրական սեփականատիրոջ, քաղաքական ազդեցություն ունեցող անձի սահմանումները և մի շարք այլ հարցեր: | | | | |

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 16.** | **Արդյունքը և** | **Իրականացման** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[6] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121254
[7] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120899

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում** | **վերջնաժամկետը** | **կարգավիճակը** | | |
| | *Արդյունքները՝* հաշվետվություն, գործողությունների պլան *Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ | Մշակվել է ԱՃԹՆ-ի համապատաս-խանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների նախագիծ: |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |
| *Միջոցառում 16. Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում* | | | | |
| Համաձայն ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագրի՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության համար վերջնաժամկետ է սահմանվել 2018թ. մայիսը: Մինչ այդ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից մշակված՝ ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների փաթեթը[8] նախ կառավարության որոշմամբ հավանության է արժանացել, որոշում է կայացվել փաթեթի՝ անհետաձգելի կարգով ԱԺ-ում քննարկելու վերաբերյալ, ապա քննարկվել և ընդունվել է Ազգային ժողովում: Ընդունվել են 2018թ. մարտի 21-ի «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N Հօ-191-Ն ՀՀ օրենքը[9], 2018թ. մարտի 21-ի «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» N Հօ-193-Ն ՀՀ օրենքը10, 2018թ. մարտի 21-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» N Հօ-192-Ն ՀՀ օրենքը[11]: Դրանով ոչ միայն մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների և պետական լիազոր մարմինների համար սահմանվել է ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ներկայացման պարտադիր պահանջ, այլև սահմանվել են հանքարդյունահանողների հետ պայմանագրերի բացահայտման, համայնքներին, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց վճարված գումարների բացահայտման իրավական հիմքեր: Հաշվետու եռամսյակում ընթացել են օրենքներից բխող ՀՀ կառավարության որոշման մշակման աշխատանքներ: | | | | |

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս | Ընթացիկ | ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, | |

[8] https://www.e-draft.am/projects/602
[9] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120753
[10] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120754
[11] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120539

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ՀԱՀ ՊՀԿ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 23. Մասնակցություն ոլորտին վերաբերող քաղաքականության մշակմանը** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ ներգրավում, կարծիքի ներկայացում *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով*

Համաձայն ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագրի՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության համար վերջնաժամկետ է սահմանվել 2018թ. մայիսը: Ուսումնասիրության շրջանակներում քննվելու են պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման տարրեր: Մասնավորապես, քննարկվելու են կոնկրետ բարեփոխումներ, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ձևավորման վրա: Մշակվելու է պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզը, որից հետո ԲՇԽ-ն, մասնավորապես՝ ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբը ձեռնամուխ կլինի պատասխանատու հանքարդյունաբերության համապարփակ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին:
Հունվարի 26-ին ԲՇԽ-ի անդամ Արթուր Գրիգորյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի հանդիպում, որի արդյունքում ուրվագծվեց հիմնախնդիրների բավականին մանրակրկիտ շրջանակ, որ անհրաժեշտ է մշակել և ամբողջականացնել ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի շրջանակներում մշակվելիք ճանապարհային քարտեզում: Որոշ հարցերի շուրջ առկա էին տարբերվող մոտեցումներ, որոնք առաջարկվեց քննարկել ԲՇԽ-ի ընդլայնված կազմով հանդիպումների ժամանակ:

*Միջոցառում 23. Մասնակցություն ոլորտին վերաբերող քաղաքականության մշակմանը*

Քարտուղարության նախաձեռնությամբ ԲՇԽ-ն ներգրավվել է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտում ռազմավարության մշակման» ծրագրի շրջանակներում մի քանի գործողություններին: Մասնավորապես, ծրագրի շրջանակում համապատասխան տեխնիկական առաջադրանքները (Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում, Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծություն) ուղարկվել են ԲՇԽ-ի անդամներին կարծիքի, որից հետո ստացված կարծիքների հիման վրա նախագծերը լրամշակվել են:

| | |
|---|---|
| **ՆՊԱՏԱԿԸ** | **Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 40. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարություն *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Իրականացվել է | ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, տարեկան)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ հաշվետվություններ *Վերջնաժամկետը*՝ եռամսյակը մեկ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 44. Մասնակցություն ԱՃԹՆ-** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների** | *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | Միջոցառումներ չեն կազմակերպվել: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 45. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը՝* եռամսյակը մեկ | Իրականացվել է | ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | Անցկացվել է ԲՇԽ-ի 1 նիստ: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 46. ԱՃԹՆ-ի աշխատանքային պլանի վերանայում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* վերանայված ԱՃԹՆ-ի աշխատանքային պլան *Վերջնաժամկետը՝* 2018թ. մարտ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 49. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* 2018թ. ապրիլ | Իրականացվել է | ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 49.1. ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների կարողությունների հզորացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* դասընթացներ, աշխատաժողովներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |

*Միջոցառում 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն*

ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները հանդիպումներ են ունեցել գործընկեր միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Համաշխարհային բանկի և Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվել են համապատասխանաբար դրամաշնորհային ծրագիրը և ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին միջազգային կազմակերպությունների մասնակցության հնարավոր ուղղությունները:

Հաստատվել է Համաշխարհային բանկի դրամաշնորհային հայտադիմումը, որի շրջանակներում ակնկալվում է ֆինանսավորել Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կազմումը, ԲՇԽ-ի ու ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կարողությունների զարգացումը, իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում, ինչպես նաև օժանդակություն է ցուցաբերվելու իրական սեփականատերերի բացահայտմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակման և իրական սեփականատերերի ռեգիստրի ծրագրային ապահովման մշակման աշխատանքներին: Հաշվետու ժամանակահատվածում վերջնական փաստաթղթերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրվել Համաշխարհային բանկի երևանյան և վաշինգտոնյան գրասենյակներին՝ իրենց կողմից քննարկումները կազմակերպելու նպատակով: Արդյունքում, Համաշխահային բանկի կողմիցստորագրվեց դրամաշնորհի համաձայնագիրը, որին պետք է հաջորդեին ՀՀ կառավարության համապատասխան մարմինների կողմից համաձայնությունները և ստորագրումը:

*Միջոցառում 40. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք*

Հաշվետու ժամանակահատվածում 6-ամսյա ժամկետով աշխատանքային պայմանագրեր են կնքվել ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատակիցների հետ: ԱՃԹՆ-ի քարտուղարության պահպանման ծախսերը և աշխատանքի վարձատրությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

*Միջոցառում 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)*

*Միջոցառում 45. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում*

Հաշվետու ժամանակահատվածում (մարտի 17-ին) տեղի է ունեցել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստ, որի ժամանակ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամները հաստատել են ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2017 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը[12], ԱՃԹՆ-ի 2017թ. աշխատանքային ծրագրի կատարողականը[13], ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագիրը[14], ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի նախնական ուսումնասիրությունը, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը կազմելու համար անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, ընդունվել են մի շարք որոշումներ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներով սահմանված հիմնական հարցերի վերաբերյալ: Կազմվել, հաստատվել և հրապարակվել է ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը[15]:

*Միջոցառում 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ*

[12] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_Quarterly_progress_report_October-December_2017.pdf

[13] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Workplan_Armenia_implementation_2017_arm.pdf

[14] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Workplan_Armenia_arm_2018_reviewed.pdf

[15] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_27_03_%202018.pdf

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Կազմակերպվել են կոնֆերանս զանգեր, իրականացվել է նամակագրություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ: Բացի այդ, միջազգային քարտուղարությանն են ներկայացվել ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մշակված ֆինանսական և այլ հաշվետվությունների նախագծերը:

*Միջոցառում 46. ԱՃԹՆ-ի աշխատանքային պլանի վերանայում և հաստատում*

Հաշվետու ժամանակահատվածում կազմվեց ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագիրը, որում արտացոլված են դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում հաստատված միջոցառումները՝ վերանայված վերջնաժամկետներով: ԱՃԹՆ-ի 2018թ. վերանայված աշխատանքային ծրագիրը հաստատվեց մարտի 27-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ընթացքում: Կազմվել և հաստատվել է նաև 2017 թվականի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի կատարողականը:

*Միջոցառում 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում*

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի մեկ հանդիպում: Տես՝ *Միջոցառում 20:*

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ն 50. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ նախնական Ուսումնասիրություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մարտ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ն 51. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մարտ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ն 52. Անկախ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի քննարկում և հաստատում** | *Արդյունքը*՝ անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանք<br>*Վերջնաժամկետը*՝ 2018թ. մարտ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 54. ԲՇԽ-ի կողմից հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկի կազմում և հաստատում, էականության սահմանում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկ<br>*Վերջնաժամկետը*՝ 2018թ. մարտ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 59. Թարգմանչական աշխատանքներ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Ընթացիկ | | Կատարվել են ընթացիկ թարգմանչական աշխատանքներ: |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 50. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրություն*

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն իրականացրել է զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքները: 2018թ. փետրվարի 20-ին ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է նախնական ուսումնասիրության լրամշակված նախագիծը, որն ուղարկվել է ԲՇԽ-ի անդամներին՝ կարծիքների և առաջարկությունների համար: Այնուհետև, ԲՇԽ-ի անդամների կարծիքները և առաջարկությունները հաշվի առնված՝ նախնական ուսումնասիրության խմբագրված տարբերակը ներկայացվել է մարտի 14-ին, որը ևս շրջանառվել է ԲՇԽ-ի անդամների միջև: Մարտի 27-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ընթացքում ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի նախնական ուսումնասիրության նախագիծը հաստատվեց, սակայն ԲՇԽ-ի անդամները առաջարկեցին որոշ շտկումներ կատարելու նպատակով մինչև ապրիլի 3-ը ներկայացնել նախնական ուսումնասիրության վերջնական նախագծի վերաբերյալ առաջարկներ, որից հետո նախնական զեկույցը կհրապարակվի:

*Միջոցառում 51. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում*

*Միջոցառում 52. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի քննարկում և հաստատում*

Հայաստանում ՄԹ ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրում ներառված է անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակումը: Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի (ՏԱ) նախագիծը ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է 2018թ. փետրվարի 20-ին, որը տեղայնացվել է՝ հիմնվելով ԱՃԹՆ-ի

միջազգային քարտուղարության կողմից մշակված նմուշի վրա: ՏԱ-ն լրամշակվել է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից և ներկայացվել ԲՇԽ-ի քննարկմանը: Մարտի 27-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ընթացքում անկախ ադմինիստրատորի ՏԱ-ն հաստատվեց և որոշվեց, որ անկախ ադմինիստրատորի ընտրության մրցութային հանձնաժողովում պետք է ընդգրկվեն 1-ական ներկայացուցիչ ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցությունից (Դավիթ Անանյան, Արմեն Ստեփանյան և Արթուր Գրիգորյան):

*Միջոցառում 54. ԲՇԽ-ի կողմից հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկի կազմում և հաստատում, էականության սահմանում*

Մարտի 27-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ընթացքում որոշվեց, որ ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համար հաշվետու կդառնանմետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած 28 ընկերություններ և երեք պետական մարմիններ՝ Պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ բնապահպանության նախարարությունը, համայնքները՝ որոնց տվյալները e-reporting-ի համակարգում կմուտքագրվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով: Հիմնվելով ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից կատարված վերլուծության վրա՝ նույն նիստի ընթացքում որոշվեց էական համարել և համադրել այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը արդյունահանվող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում է 1% և ավելի: Համաձայն ԲՇԽ-ի որոշման՝ համադրվող են համարվելու այն կազմակերպությունները, որոնք հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե են վճարել 150 միլիոն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ (բացառությամբ՝ բնապահպանության նախարարությանը վճարված գումարները և մաքսային վճարներն ու տուրքերը):

*Միջոցառում 55. Պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի և հաշվետվությունների ներկայացման կարգի և ժամկետների մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում ԲՇԽ-ի կողմից*

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մշակվել է պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի նախագիծը: Նախագծի կազմման ընթացքում մի շարք քննարկումներ են կայացել շահագրգիռ կողմերի հետ: Մասնավորապես, փետրվարի 23-ին և մարտի 2-ին քննարկումներ են անցկացվել արդյունահանող կազմակերպությունների պաշտոնատար անձանց հետ:

**Մարտի 27-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ընթացքում ներկայացվեց, որ ԱՃԹՆ-ի զեկույցի մշակման համար նախատեսված ժամանակահատվածը բավարար չէ որակյալ աշխատանք իրականացնելու և ԱՃԹՆ-ի ստանդարտի ու ԲՇԽ-ի պահանջներին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի հրապարակման համար: Հաշվի առնելով, որ բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկվել են հիմնարար աշխատանքները նվազագույն ժամկետում կազմակերպելու համար, այդ թվում, ընդունվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթը, իսկ միջազգային գործընկերների հետ նախաձեռնվել և հաստատվել են համապատասխան ծրագրերը, ԲՇԽ-ն որոշել է՝ զեկույցի հրապարակման վերջնաժամկետը 2,5 ամսով հետաձգելու խնդրագրով դիմել ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդին՝ նշելով ԲՇԽ-ի և ՀՀ կառավարության մինչ այժմ իրականացրած աշխատանքները և զեկույցի ժամանակին հրապարակմանը խոչընդոտող պատճառներն ու դրանց հիմնավորումը: Կից ներկայացված է երկարացման նամակները (Հավելված 1):**

Հավելված 1

ԱՃԹՆ-ի զեկույցի ներկայացման վերջնաժամկետի երկարացման նամակներ

**MINISTER OF JUSTICE**
**REPUBLIC OF ARMENIA**

*3/8 Yazgen Sargsyan str. Yerevan 010, tel. 00374 10 594004*
*E-mail: info@moj.am*
*30 March, 2018*

**Fredrik Reinfeldt**
**Chair**
**Extractive Industries Transparency Initiative**

Dear Mr. Reinfeldt,

On behalf of me and the EITI Multi-stakeholder Group of Armenia I would like to approach you and the EITI board, in accordance with the procedure established by the EITI Standard, with an important issue related to the obligation of publication of the EITI Report of the Republic of Armenia.

Currently the EITI MSG of Armenia, the EITI National Secretariat and other stakeholders are actively engaged in activities of preparation of the first EITI National Report as well as the other obligations set forth by the EITI Board Decision. Since the EITI candidacy of Armenia the EITI MSG, the Government of Armenia and our international partners have been invested great efforts and commitment to fulfil our obligations.

Here is a brief description of ongoing and already fulfilled activities.

1. **Preparation of the Scoping Study of the First EITI Report of Armenia**

   With the support of the British Embassy in Yerevan, in July, 2017 the MSG commissioned the Center for Responsible Mining (CRM) of the American University of Armenia to prepare the Scoping Study of the First National EITI Report of Armenia. The ToR for the Scoping Study included a list of tasks, namely, study and recommendations on issues demanding MSG decisions regarding the coverage of the EITI Report, determination of the materiality thresholds, identification of the reporting state entities and mining companies, financial flows to be reported and reconciled, reconciliation thresholds, and other relevant issues. The final draft of the Scoping Study was submitted in March, 2018. The MSG approved the Scoping Study of Armenia at the MSG meeting held on 27 March, 2018.

2. **Legal amendments aimed at compliance with the EITI**

In the scope of the same Project the CRM was commissioned to carry out a legal study to identify the legal gaps and obstacles hindering the EITI implementation in Armenia. A legal package was submitted to the MSG in November 2017. The Government confirmed the necessity of legal amendments in order to ensure the EITI reporting process not only by the mining companies, but also state bodies. For example, the State Revenue Committee of Armenia, which is the main EITI reporting state body, would not provide and publish tax and payment data disaggregated on companies' level unless relevant legal amendments were adopted. Taking into account the EITI commitment and deadlines the Draft Laws had been approved by the Government on 25 January 2018, which was necessary to send the drafts for Parliamentary discussions. Simultaneously the Government had granted the Draft Laws the "urgent" status. The "urgent" status meant that the Draft Laws should be discussed in the National Assembly of RA through an accelerated procedure (the law adoption process took two months while the average period for is six months). This was a huge step forward since otherwise the Laws would have been adopted in September. Besides, due to 2015 Constitutional amendments Armenia is shifting to a parliamentary system of governance in April 2018. So the Parliament of RA works in its maximum capacity aiming at adoption of the Constitutional Laws. However, the EITI Laws were adopted by the Parliament in March, 2018.

After the first hearing of the Draft Laws in the Parliament the deadline for submission of the EITI reports for mining companies and state agencies was moved from 1st of July to 1st of August, stating that taking into consideration the legal procedures of Armenia, it is not feasable to adopt the secondary legislation and, after its entry into force, to provide the reporting entities one month period to submit the EITI reports by 1st of July.

3. **Approval of the World Bank's "Armenia Extractive Industries Transparency Initiative Support" Grant Project**

The National Secretariat submitted an "Armenia Extractive Industries Transparency Initiative Support" Grant Project to the World Bank, which was approved in November, 2017. As a result of discussions with our World Bank partners in early 2017, in the EITI Work plan the MSG set forth that the Independent Administrator

could be selected in September, 2017. However, the World Bank submitted the grant package to the Government in February, 2018. Due to efforts of National Secretariat and our international partner the Grant Agreement will be approved and come to force in mid-April, 2018, which is again, the minimum required time according to the Government procedures. The World Bank Grant covers the funding of a list of the EITI Work plan activities among which the key is the preparation of the EITI Report of Armenia.

4. **Establishment of the EITI National Secretariat**

In January 2018 the EITI National Secretariat was established under the Government Staff of Armenia. Despite the initial agreement with the World Bank, later the funding of the National Secretariat expenses was excluded from the grant's coverage. Therefore starting January 2018 the Government is funding the EITI National Secretariat expenses and annual EITI membership fee by the means under the provision "Support for the Extractive Industries Transparency Initiative Secretariat under the Government Staff" of 2018 State Budget.

5. **Development of the EITI e-reporting platform**

With the support of the UNDP Armenia the MSG commissioned the development of the EITI-Armenia's official website and EITI e-reporting portal in January, 2018. The portal will be used to collect electronic EITI reports from both mining companies and state agencies using e-signature system. The platform will create a database consisting information from submitted reports and will be based on Open Data Principles.

6. **Legal status of the Beneficial Ownership Disclosure Roadmap of Armenia**

The Beneficial Ownership Disclosure Roadmap of Armenia was developed with support of the EBRD Project. The Roadmap was approved by the MSG and published at the end of December, 2017. On 22 March 2018 the Roadmap was presented at the Anti-Corruption Council session[i] chaired by the Prime Minister of Armenia, during which the Prime Minister gave instructions to grant the Roadmap a legal status in order to ensure its institutionalized implementation. The Government Decree on Beneficial Ownership Disclosure Roadmap of Armenia and Prime Minister's Decree on the Structure of the Inter-agency Working Group for the Roadmap Implementation were approved by the Government at the end of March, 2018.

7. **Development of the EITI Reporting Templates**

   The EITI National Secretariat in collaboration with the representatives of relevant state agencies, metal mining companies and other stakeholders has started to develop the EITI Reporting Templates taking into account the Scoping Study findings, the MSG decisions, the EITI Standard's requirements and best international EITI reporting practice. These activities will allow us to start developing the secondary legislative acts drafts and discussing the templates with the Independent Administrator in more effective manner and timeframe.

**Pressing issues**

Despite the efforts made by the Government and the MSG of Armenia, there are several circumstances that may risk timely publication of the EITI Report of Armenia.

*These are as follows:*

According to Armenian legal practice, as soon as the EITI Law Amendments come into force, the secondary legislation shall be discussed and the Draft Government Decision(s) shall be submitted to the Government. The EITI reporting templates for companies and state entities shall become a part of the secondary legislation (Government Decree). This process takes approximately two months. On the other hand, according to the EITI requirements the EITI reporting templates shall be agreed upon with the Independent Administrator. The World Bank Grant Agreement shall come into force in mid April, after which the Government may announce a tender for the Independent Administrator. The procurement process usually lasts 1-1.5 months. At the MSG meeting held on 27 March 2018, the MSG emphasized that the reporting templates should be agreed with the Independent Administrator justifying its decision by the fact that the EITI reporting is a new process for Armenia and, therefore, it demands more professional approach. Taking this into consideration the Government Decision on Reporting Templates and Reporting Procedure may be adopted in June. After having the final formats of the EITI reports the IT company may complete the development and test the e-reporting platform and the reporting entities shall be trained. The MSG thinks that e-reporting system will highly improve the efficiency of the reporting process, ensure that the reports are submitted in time, and also facilitate the work of Independent Administrator with the reporting entities if any adjustments of data provided by the reports are needed. The reporting mining companies and state agencies must be provided with a 1 month period to complete the reports and submit them to the Independent Administrator. As

it is set out in the Law, the reporting mining companies and state agencies shall submit the EITI reports at the latest by 1st of August, 2018. Based on this, in order to publish the EITI Report by 9 September, 2018, within a 1-month period the Independent Administrator shall reconcile the data, complete the EITI Report, submit it to the MSG, and then the MSG shall review and approve the EITI Report of Armenia. The MSG is convinced that before approving the EITI Report the MSG should have sufficient time to review the draft Report and submit its recommendations or comments on at least identified major issues.

Despite the above-mentioned challenging circumstances the EITI MSG and the Government of Armenia have taken all possible measures to mitigate its negative impact on the success of the EITI implementation process.

The EITI MSG of Armenia finds that these terms are not feasible, and due to the short deadline, the quality and credibility of the EITI Report of Armenia may suffer considerably. Therefore, at the MSG meeting held on 27 March, 2018 **the MSG made a decision to submit the request to extend the EITI Report publication deadline for 2.5 months, from 9 September to 27 November, 2018**. The EITI MSG of Armenia, the EITI National Secretariat and the Government of Armenia will continue to make maximum effort to go on with the EITI implementation process in a good manner.

We are hopeful that the EITI Board will consider our extension request and, taking into account the mentioned facts, will satisfy our claim.

**Sincerely,**

**Davit Harutyunyan**
*Minister of Justice*
*Chair of the Multi-stakeholder Group of Armenia*

CC: Jonas Moberg, Head of the EITI Secretariat
Dyveke Rogan, Policy and Regional Director
Oliana Valigura, Country Manager
EITI International secretariat

---

[i] http://www.gov.am/en/news/item/9413/

• • •

**MINISTER OF JUSTICE**
**REPUBLIC OF ARMENIA**

*3/8 Vazgen Sargsyan str. Yerevan 010, tel. 0037410594004*
*E mail: info@moj.am*

*05 May, 2018*

**To: Fredrik Reinfeldt**
**Chair**
**Extractive Industries Transparency Initiative**

Dear Mr. Reinfeldt,

In addition to the request letter to extend the EITI Report publication deadline submitted to you on 30 March 2018, were we presented you the list of issues that we considered as risks for timely publication of the EITI Report of Armenia, I would like to inform you about current political developments in Armenia.

Due to public demand and demonstrations, the newly appointed Prime Minister Serj Sargsyan resigned on April 23, 2018. The Parliament of Armenia failed to elect new Prime Minister on parliamentary session held on 1st of May, 2018, after which public demonstrations continued in favour of opposition leader in Armenia. The next votes of the Prime Minister will take place on 8 May, 2018. The only nominated candidate for the Prime Minister is the opposition leader Nikol Pashinyan, who most probably will be elected as an interim Prime Minister of Armenia and will form the interim Cabinet of Ministers. These processes will directly influence the MSG structure and functionality. The MSG members from the Government constituency may leave their positions in the new Government. It will take some time for the Government to nominate new MSG members representing the Government of Armenia. The new members shall be given an opportunity to get acquainted with the EITI implementation process in Armenia, all the related materials and their own responsibilities as an MSG member.

Taking into consideration this situation, the MSG most probably cannot make decisions during the upcoming period on important issues regarding preparation of the EITI report of Armenia,.the most important of which is adoption of the EITI reporting templates for the state agencies and extractive companies. Furthermore, adoption process of the Government Decision on the EITI reporting templates may take longer time than expected.

The EITI Secretariat of Armenia will continue to make every effort to coordinate and implement the activities set forth in the EITI Work plan of Armenia and cooperate with the stakeholders to make the transition process as smooth as possible. In any case, on behalf of me and the EITI Multi-stakeholder Group of Armenia I kindly ask you to consider these new circumstances, while making decision on extension of publication of the EITI Report of the Republic of Armenia.

Sincerely,

**Davit Harutyunyan**
Minister of Justice
Chair of the Multi-stakeholder Group of Armenia

CC: Jonas Moberg, Head of the EITI Secretariat
Dyveke Rogan, Policy and Regional Director
Oliana Valigura, Country Manager